

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընդունված է  
 21 հունիսի 2014 թ.

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9.2-րդ հոդվածի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«2936	պրովիտամիններ, վիտամիններ	վիտամին
3002 20 000	պատվաստանյութ՝ մարդու համար	պատվաստանյութ
3002 30 000	պատվաստանյութ՝ կենդանիների համար	պատվաստանյութ
3003	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար, մանրածախ առևտրի համար չփաթեթավորված	դեղ
3004	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար՝ փաթեթավորված մանրածախ առևտրի համար	դեղ
3303 00	օժանելիք	օժանելիք»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

1. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված վիտամինների, պատվաստանյութերի, դեղերի և օժանելիքի իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2014 թվականի նոյեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված վիտամինների, պատվաստանյութերի, դեղերի և օժանելիքի իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

Հայաստանի Հանրապետության  
 Նախագահ

Ս. Սարգսյան

21 հուլիսի 2014 թ.  
 Երևան  
 ՀՕ-108-Ն